64. ԶԱՆԿՆԻ ԱԽՉԻԿ ԱՉՔ ԹԱԼՈՂ ՏՂԵՆ

Կէղնի, չէղնի աղքատ տղե մը կէղնի։

Օրըմ փողոցի միջով կընցնի, գլուխ կբանցրցու վերևանց, կիշքե, տեսնա օր ախչիկըմ կա փանշարեն, խուտում չոքերուց հետ կկոտրի։

Էդ ախչիկ լե զանկին մարդու մը ախչիկ կէղնի։

Տղեն կդառնա կիգա տուն։ Մամու վրեն զոր կդնե թե՝ կէրթաս, զֆլան մարդու ախչկա սիրտ կէնիս, էրթամ ուր խեչ։

Մամն կասե.— Լաո, գու ֆուխարե մը փարչա իս, էնի մեկ զանկին մարդու մը ախչիկ, ի՞նչ խելք է, էնի իսկի քու հետ կիտա ու կառնե՞։

Մամ տղի ձեռքեն յախա չկառնա ազատե, կէրթա պառվու մը կասե.— Իմ տղի աչք հ՚ընկեր է ֆլան մարդու ախչիկ, զիմ փողպատ բռներ է, էդա հ՚իգամ, էդա էրթամ, զէդ ախչկա սիրտ կէնիս, ես էրթամ խեչ ու հ՚իգամ։ Օր զէդ բան գլուխ հանիս, ինչ օր հ՚ուզիս՝ կիտամ։

Պառավ կասե.— Դու գնա, զտղեն ճամբե, թող հ՚իգա, էնի իմ գործն է, հասավ հ՚իս։

Մամ գնաց, տղին ասեց.— Ելի գնա ֆլան պառվու խեչ, էնի զքու գործ կշինե։

Տղեն կելնի կիգա։

Պառավն կասե.— Էկա՞ր։

Տղեն կասե.— Հա, էկա։

Կասե.— Ելի, դու գնա շուկեն, կտորըմ սապոն առ ու էկո, էնի իմ գիտնալիքն է։

Տղեն կելնի կէրթա շուկեն ու կառնի կտորըմ սապոն, կիգա։

Պառավն կասե.— Էկա՞ր, դը ելի շալկե զէդա պղինձն ու էրթանք։

Տղեն կելնի, կշալկե զպղինձ, պառավ լե կբողջե զուր փոթեր, կըզարկե հ՝անթե տակ, կընկնի տղի հ՝ետև ու կէրթան։ Կիգան, էդ ախչկա տուն լե քաղքեն դուրս էր շինուկ։

Զօճախն կդնեն ու պառավ տղին կասե.— Դը գնա ջուր բի, լվացք էնինք։

Տղեն կէրթա ջրի, պառավ կկպու զօճախն ու զպղինձ բերնի վրեն կկոռնե վըր կրակին։

Տղեն կառնե ջուր ու կիգա։

Պառավն կասե.— Դը լից։

Տղեն կըլնա պղնձի օռքու վրեն, ջուր կթափի վըր կրակին, կթըշթըշա։

Ախչիկ նստուկ էր փանջարեն, կիշքեր։ Կասե.—Նանե, էդի ի՞նչ է կէնիս, դառցու զպղինձ, դառցու, օռք դիր վըր կրակին։

Պառավն խստու ըստ հաղ մեկել կշտին կօլրե, կասե.—Հըմլա է։

Տղեն մեկ լե կբերե զջուր, կըլնա վըր պղնձի օռաց, ախչիկ կիշքե, վիրա կբոռա.— Ջանըմ, էդ հըմալ չէ, դառցու վըր օռաց։

Պառավ զինկ կդնե բիլմըզութեն, կօլըրեր հա էն կշտին, հա էն կշտին։

Ախչիկ ճվալով, խժալով, գեժտան գեժ հասկցուց, զպղինձ դառցուց վըր օռաց, տղեն բերեց զջուր ու լցեց պղնձի մեջ։

Ջուր օր եռք ելավ, ըստ հաղ բերեց դրեց զտաշտ, լվացք կէներ։

Զտաշտ դառցուց վըր քիթ ու բերնին, զհալվըներ դրեց վըր օռաց ու կբերեր ջուր, կըլներ վըր հալվներուն ու սապոն կքսեր վրեն։

Ախչիկ փանջարից կիշքեր։ Ասեց.— Ջանըմ, նանե, հըմալ չէ։

Պառավն ասեց.— Լաո, ըպա իմա՞լ է, մըր ադաթն էդա հըմալ է։

Ախչիկն ասեց.—Դառցու զտաշտ վըր օռաց, զհալվըներ դիր մեջ ու զջուր լից վրեն, քսե սապոն վրեն ու լվա։

Պառավն թարս կհասկներ, զտաշտ կդառցուցներ հա էն կշտին ու հա էն կշտին։

Ախչիկ քըրբուց կպատռեր։

Վիրա փանջարից կբոռեր. նանե, հըմալ չէ։ Պառավն անկաճ չէներ. զինկ դրեր էր բիլմզութեն ու կծիծղեր վըր ախչկան։

Ախչիկ ճվալով ձեն կտրավ, հ՝ընկավ փորհար, հասկցուց։

Պառավ դառցուց զտաշտ վըր օռաց, դրեց զհալվըներ մեջ, լցեց զջուր վրեն, սապոն քսեց վըր հալվըներուն ու զուր լվացք էրեց։

Էրեց խըլըսավ, հանեց զշըրիդ զարկեց,... թալեց վրեն օր չորներ։

Հ՝իրկուն օր էղավ, պառավ տղին ասեց.—Հ՝էսօր պիտի մնաք էդա տեխ, գնա մզիկ ձեռքըմ լե յաթախ բի օր պառկինք, քնինք։

Տղեն ղնաց, առավ ձեռքըմ յորղան ու դոշակ, էկավ։

Մութն օր էղավ, թալին ու հանին զուրանց հալավ, օր պառկեն քնեն։

Պառավն տղին ասեց.— Իշե վըր ընծիկ, տես ես իմալ կէնեմ, դու լե հըմալ էնիս։

Ախչիկ վիրա փանջարից կիշքեր։

Կասեր.— Ջանըմ, էդա պառավն ու ուր տղեն օլին ին, աշխարք չըն տեսի։

Պառավն հանեց զուր հալավ ու վերցուց զընկողին, տկեն մտավ, գլխեն ելավ դուրս։

Ախչիկ տեսավ, բոռաց, ասեց.— Նանե, էդ ի՞նչ է կէնիք, քնել հըմալա չէ, դրեք զգլուխ ձի վըր բարձին ու գլխու թարաֆեն պառկեք, քնեք։

Պառավն ասեց.— Հըմալա է։

Թորկեց զգլխու դին ու զոտներու դին, դառցավ էն կշտեն մտավ, էն կշտեն ելավ դուրս։

Տղեն օր տեսավ, էն լե հըմալ էրեց։

Ախչկա ճար կտրավ, ասեց.— Նանե, ճամբե զքու տղեն, հ՚իգա հ՚ոդա, սովըրցում, իմալ կպառկին, թըղ հ՚իգա քըզիկ սովրցու, պառկեք քնեք։

Պառավն ճամբեց զտղեն, գնաց ախչկա խեչ։

Տղեն օր գնաց, ելավ վի, ներս մտնելու պես ախչկա տեխ փռուկ էր, մտավ տկեն, գլխեն ելավ դուրս։

Քանի ախչիկ կասեր. «Տղա, էդա հմալա չէ, էդա տեխով բաց զյորղան, մտի տակ, զգլուխդ դիր վըր բարձին ու քնի». տղեն զուր գիցած կէներ, կմտներ տկեն, գլխեն կելներ դուրս, գլխեն կմտներ, տկմանց կելներ դուրս։ Ախչիկ ինչ կէներ, խոսկ չըր հասկներ։

Ճար կտրավ, խայիմ գրկեց, տղեն ճըմըլկտաց, մեկ լե մտավ տկեն, գլխեն ելավ դուրս։

Չէ, ախչիկ տեսավ օր էդի թաթ է, ժիրըմ գրկեց զտղեն, զարկեց վըր ուր սրտին ու շրշեց զյորղան, մտավ տեխի մեջ, զգլուխ գրեց վըր բարձին, ասեց.— Հըմալա կքնեն։

Ինչ էրեց տղեն, չթորկեց օր ելներ, տղեն տրպըլտկաց, ախչկա թեերու միջեն փրթավ ու թռավ ելավ ախչկա փորու վրեն։

Ասեց.— Քնել հըմալա է, հ՚որի ես չընկ գինե՞ օր հըմալա չէ, մախսուս կէնեք, օր զքզիկ ձեռք բերենք։

Զուր գործ տեսավ, ելավ հ՚իջավ, էկավ պառվու խեչ, առան զուրանց փոթերն ու թորկին գնացին։

Էլ սաղեց հ՚ըմնօր կիգեր ախչկա խեչ ու կէրթեր, տղեն զախչիկն էրեց հ՚ուրնով։